ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/100

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.06.2019թ. թիվ 26/10181-2019 գրությամբ «Էլեկտրոպրիբոր» ՓԲԸ-ին և «Մեժոտռասլեվոյ Էներգոպռոմիշլեննիյ Մոնտաժ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը՝ պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 12.06.2019թ. թիվ ՊՆ/02/869-2019 գրության պատճենի հիման վրա, 18.06.2019թ. թիվ 26/10181-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Էլեկտրոպրիբոր» ՓԲԸ-ին և «Մեժոտռասլեվոյ Էներգոպռոմիշլեննիյ Մոնտաժ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էլեկտրոպրիբոր» ՓԲԸ-ի և «Մեժոտռասլեվոյ Էներգոպռոմիշլեննիյ Մոնտաժ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էլեկտրոպրիբոր» ՓԲԸ-ն 28.06.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆԱՏԴ-ԳՀԱՊՁԲ-10/32 ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում, Ընկերությանը առ այսօր չի ծանուցվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու թիվ ՍՑ-ՆԳ-2019/29 որոշումը, ուստի 29.05.2019թ. ՀՀ ՊՆ ՆԱՏԴ-ԳՀԱՊՁԲ-10/32 ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում տրամադրված փաստաթղթերում բացակայում է Ընկերության կողմից միտումնավոր խեղաթյուրված կամ կեղծ տեղեկատվության տրամադրման փաստը»:

Սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ «Մեժոտռասլեվոյ Էներգոպռոմիշլեննիյ Մոնտաժ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում ՍՑ-ՆԳ-2019/100 ընթացակարգի շրջանակներում չի ներկայացվել:

«Էլեկտրոպրիբոր» ՓԲԸ-ն և «Մեժոտռասլեվոյ Էներգոպռոմիշլեննիյ Մոնտաժ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/100 ընթացակարգի շրջանակներում 28.06.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չեն ապահովել իրենց մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.06.2019թ. թիվ ՊՆ/02/869-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ կարիքների համար «Էլեկտրական ապրանքների» գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/32» ծածկագրով ընթացակարգին հայտ էին ներկայացրել թվով 12 մասնակիցներ, այդ թվում՝ «ԷԼԵԿՏՐՈՊՐԻԲՈՐ» ՓԲԸ-ն, որը համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա հանդես էր գալիս «Межотраслевой Энергопромышленный Монтаж» ՍՊԸ-ի հետ:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/32» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրությամբ պարզել է, որ «ԷԼԵԿՏՐՈՊՐԻԲՈՐ» ՓԲԸ-ի (կոնսորցիում Межотраслевой Энергопромышленный Монтаж-ՍՊԸ-ի հետ) կողմից հայտը ներկայացվել է ընթացակարգի հրավերի 2.1 կետի 6-րդ ենթակետի պահանջների խախտմամբ, մասնավորապես, կոսորցիումի կողմից ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացվել է 29.05.2019թ., այնինչ ՀՀ գնումների հետ կապված բողոքները քննող անձի 17.05.2019թ. թիվ ՍՑ-ՆԳ-2019/29 որոշմամբ «ԷԼԵԿՏՐՈՊՐԻԲՈՐ» ՓԲԸ-ն արդեն իսկ ներառված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում (ըստ պաշտոնական տեղեկագրում հրապարակված տվյալների՝ մասնակիցը նշված ցանկում ներառված է 22.05.2019թ-ից մինչև 22.05.2021թ):

Հիմք ընդունելով այդ հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ԷԼԵԿՏՐՈՊՐԻԲՈՐ» ՓԲԸ-ի (կոնսորցիում Межотраслевой Энергопромышленный Монтаж-ՍՊԸ-ի հետ) հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/100 ընթացակարգի շրջանակներում 28.06.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/100 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/100 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 29.05.2019թ. հայտ է ներկայացրել «Էլեկտրոպրիբոր» ՓԲ և «Մեժոտռասլեվոյ Էներգոպռոմիշլեննիյ Մոնտաժ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ «ԷԼԵԿՏՐՈՊՐԻԲՈՐ» ՓԲԸ-ն (կոնսորցիում Межотраслевой Энергопромышленный Монтаж-ՍՊԸ-ի հետ) «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/32» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 29.05.2019թ. դրությամբ հայտ է ներկայացրել, սակայն 17.05.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2019/29 որոշմամբ ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում՝ (ըստ պաշտոնական տեղեկագրում հրապարակված տվյալների՝ մասնակիցը նշված ցանկում ներառված է 22.05.2019թ-ից մինչև 22.05.2021թ):

3. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է կոնսորցիումի հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.06.2019թ. թիվ 26/10181-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.06.2019թ. թիվ ՊՆ/02/869-2019 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Էլեկտրոպրիբոր» ՓԲԸ-ի 28.06.2019թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենք 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, հրապարակում է լիազորված մարմինը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի*** և որակավորման չափանիշներին իր համապատասխանության ***մասին***:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***29.05.2019թ.*** հայտ է ներկայացրել «Էլեկտրոպրիբոր» ՓԲ և «Մեժոտռասլեվոյ Էներգոպռոմիշլեննիյ Մոնտաժ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ «ԷԼԵԿՏՐՈՊՐԻԲՈՐ» ՓԲԸ-ն (կոնսորցիում Межотраслевой Энергопромышленный Монтаж-ՍՊԸ-ի հետ) «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/32» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 29.05.2019թ. դրությամբ հայտ է ներկայացրել, սակայն 17.05.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2019/29 որոշմամբ ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում՝ (ըստ պաշտոնական տեղեկագրում հրապարակված տվյալների՝ մասնակիցը նշված ցանկում ներառված է 22.05.2019թ-ից մինչև 22.05.2021թ):

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է կոնսորցիումի հայտը:

Ամփոփելով վերը նշված փաստերը, արձանագրում եմ, որ «Էլեկտրոպրիբոր» ՓԲ և «Մեժոտռասլեվոյ Էներգոպռոմիշլեննիյ Մոնտաժ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը 29.05.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ «Էլեկտրոպրիբոր» ՓԲԸ-ն մինչ սույն Ընթացակարգին հայտ ներկայացնելը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 17.05.2019թ. կայացված թիվ ՍՑ-ՆԳ-2019/29 որոշմամբ ներառված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով՝ 22.05.2019թ. մինչև 22.05.2021թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը***

<u>ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում</u>:

Ընթացաարգի հրավերի ՄԱՍ 1-ի 2.1 կետի 6-րդ ենթակետով սահմանվել է, որ ***<u>սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:</u>***

Այսպիսով, վերը նշված նորմերը հստակ սահմանում են, որ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Միաժամանակ Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու*** և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված ***հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող*** կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը***, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ «Էլեկտրոպրիբոր» ՓԲԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի գտնում եմ, որ առկա են «Էլեկտրոպրիբոր» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերվում է «Էլեկտրոպրիբոր» ՓԲԸ-ի կողմից վկայակոչված այն փաստին, որ Ընկերության առ այսօր չի ծանուցվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու թիվ ՍՑ-ՆԳ-2019/29 որոշումը, ուստի 29.05.2019թ. ՀՀ ՊՆ ՆԱՏԴ-ԳՀԱՊՁԲ-10/32 ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում տրամադրված փաստաթղթերում բացակայում է Ընկերության կողմից միտումնավոր խեղաթյուրված կամ կեղծ տեղեկատվության տրամադրման փաստը, ապա արձանագրում եմ, որ նման դիտարկումն անհիմն է հետևյալը պատճառաբանությամբ.

Օրենքի 50-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում կայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում որոշումը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում կայացված որոշումը սույն մասով սահմանված ժամկետում ուղարկվում է պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին:

Վերը նշված հոդվածի պահանջը իմպերատիվ կերպով սահմանում է, որ միայն պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում է որոշումը ուղարկվում բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին, ուստի հաշվի առնելով այն փաստը, որ «Էլեկտրոպրիբոր» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՍՑ-ՆԳ-2019/29 որոշումը չի պարունակում պետական գաղտնիք, ապա Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշումը չի ուղարկել ընկերությանը, այլ ղեկավարվելով Օրենքի 50-րդ հոդվածի 11-րդ կետով 21.05.2019թ. հրապարակել է տեղեկագրում (gnumner.am):

Ինչ վերաբերում է «Մեժոտռասլեվոյ Էներգոպռոմիշլեննիյ Մոնտաժ» ՍՊԸ-ին, ապա գտնում եմ, որ առկա չեն վերջինիս նշված ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ սույն գնման գործընթացին կոնսորցիումի հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել «Էլեկտրոպրիբոր» ՓԲԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու փաստով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.06.2019թ. թիվ 26/10181-2019 գրությամբ՝

1. «Էլեկտրոպրիբոր» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էլեկտրոպրիբոր» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

2. «Մեժոտռասլեվոյ Էներգոպռոմիշլեննիյ Մոնտաժ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**